ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՆԱ ՅՈՒՐԻԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝

ք.գ.դ., պրոֆեսոր Մ. Մարգարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարով

պ.գ.թ., դոցենտ Ռ. Կարապետյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հոկտեմբերի 25-ին ժամը 16:00-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. սեպտեմբերի 11-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պ.գ.թ., դոցենտ՝

Վ. Պետրոսյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Թեմայի արդիականությունը:</u> Արդի աշխարհակարգը նոր մարտահրավերներ է նետում մարդկությանը, ինչն առաջացնում է ինքնորոշման գաղափարի նորովի դիտարկման և վերարժևորման անհրաժեշտություն:

Պատմության հոլովույթում գերազանցապես դիտարկվում է ժողովուրդների ինքնորոշման խնդիրը, մինչդեռ գլոբալիզացիայի պայմաններում կերպափոխվող հասարակություններում առկա քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման տեսանկյունից անհրաժեշտություն է առաջանում ինքնորոշման հիմնախնդիրը դիտարկելու երեք մակարդակում՝ անհատ, ազգ, պետություն: Այս համատեքստում ազգային պետություններում ընթացող արդիականացման գործընթացները սերտորեն փոխկապակցվում են ինքնորոշման հիմնախնդրի հետ:

Զուգահեռաբար արդիականացման ընթացքում էթնոքաղաքական հակամարտություններն ստանում են որոշակի քաղաքակրթական բնույթ: Ինչպես նշում է հայ հետազոտող Հայկ Քոթանջյանը, «համաշխարհային քաղաքակրթության զարգացման ներկայիս շրջանը բնութագրվում է միջքաղաքակրթական շփումների աճող անկայունությամբ և, միաժամանակ, ներքաղաքակրթական երկխոսության՝ համաձայնության ամրապնդմամբ»[1]: Դա մեծապես պայմանավորում է ներքաղաքակրթական հակամարտությունների խաղաղ կարգավորումը: Ընդհանուր արժեքների առկայությունն ու ներքաղաքակրթական համերաշխությունը, հիմնականում, առավել նպաստավոր պայմաններ են ապահովում նաև ինքնորոշման իրավունքի իրացման, դրա միջոցով կայունության և անվտանգության ապահովման համար: Հակամարտության կողմերի՝ միջքաղաքակրթական շփումների բարդության պայմաններում, առաջնային կարևորություն է ստանում առնվազն ընդհանուր արժեքների առկայությունն ու դրանց հիման վրա կարգավորման կառուցումը: Այս համատեքստում Ղարաբաղյան հակամարտության քննարկումը հնարավորություն է տալիս դիտարկել կողմերի արժեքային տարբերությունների և կարգավորման գործընթացի ընկալումների միջև փոխադարձ կապն ու դրա ազդեցությունը բանակցային գործընթացի վրա:

Վերոնշյալի համատեքստում Ղարաբաղյան հիմնախնդրի վերլուծությունը՝ միջազգային փորձի հետ համադրմամբ, արդիական է, քանի որ հնարավորություն է ընձեռում մի կողմից քննարկելու Ղարաբաղի ինքնորոշման հարցի արդիականացման հնարավորությունները ժամանակակից քաղաքական գործընթացների համատեքստում, մյուս կողմից՝ դիտարկելու դրա արդյունավետության բարձրացման միջոցները՝ հաշվի առնելով բանակցային գործընթացի կերպափոխումներն ու հիմնական խոչընդոտները: Տվյալ դեպքում հիմնախնդրի արդիականացումը ենթադրում է նաև միջազգային հանրության շրջանում այն ընկալման ամրապնդումը, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը,

---

[1] Քոթանջյան Հ. Ս., Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր.: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010.

հիմնարար իրավունք լինելուց զատ, առաջին հերթին, ֆիզիկական գոյության, անվտանգության և տարածաշրջանային կայունության խնդիր է:

Արցախի ժողովրդի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հրամայականն անհրաժեշտություն է ձևավորում խնդիրն ուսումնասիրելու միջազգային քաղաքական գործընթացների, նման խնդիրների կարգավորման փորձի համատեքստում: Ելնելով հակամարտությունների սկզբունքային նմանություններից և միաժամանակ հաշվի առնելով դրանց միջև առկա տարբերությունները՝ աշխատանքում դիտարկվել է ինքնորոշման իրացման, այդ հիմքով ձևավորված հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը:

<u>Հիմնական գիտական մշակվածության աստիճանը:</u> Ձեռնարկելով մեզ հետաքրքրող հիմնախնդրի ուսումնասիրությունը՝ ելակետ ենք ընդունել Ք.Դոյչի այն մոտեցումը, որ «արդիականացումն ակտիվացնում է էթնիկ գիտակցումը»[2]:

Աշխատանքում դիտարկվել է արդիականացման գործընթացի ազդեցությունն արժեքային կերպափոխումների, հատկապես ազգային գիտակցության աճի վրա, արդիականացման գործընթացի ազդեցությունն ինքնորոշման վրա: Ուսումնասիրված գրականությունը համակարգել ենք ըստ հիմնական խնդիրների՝ քաղաքական արդիականացման գործընթաց և նոր աշխարհակարգ, ինքնորոշումը որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ, Ղարաբաղյան հակամարտություն:

Դանիել Բելլը տարանջատում է մտցնում երեք հասկացությունների միջև՝ մոդեռնիթի («modernity»), մոդեռնիզմ («modernism») և մոդեռնիզացիա («modernization»)[3]: Արդիականության տեսության մեջ առանձնանում է երկու ուղղություն՝ պահպանողական (Ս.Հանթինգթոն, Խ.Լինց[4]), որի հետևորդները հիմնական խնդիրը տեսնում են քաղաքական կյանքում հասարակության ներգրավման անհրաժեշտության և դրա համար անհրաժեշտ նրանց շահերն ագրեգացնող ինստիտուտների բացակայության մեջ, և ազատական (Հ.Ալմոնդ, Լ.Պայ[5]),

---

[2] **Deutsch Karl W.**, Social Mobilization and Political Development. The American Political Science Review, 1961, pp. 493-514. **Дойч К.,** Национальная интеграция: обзор некоторых концепций и исследовательских подходов, Этнос и политика: Хрестоматия/Авт.-сост. А.А.Празаускас.-М.: Изд-во УРАО, 2000, с. 190-199.

[3] **Белл Д.,** Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнодирования/ Перевод с английского. Изд. 2-ое, испр. и доп. – М.: Academia, 2004. CLXX. – 788 с. **Белл Д., Иноземцев В.Л.,** Эпоха разобщенности: Размышления о мире XXI века. - М.: Центр исследований постиндустриального общества, 2007. – 304 с.

[4] **Samuel P. Huntington,** The Clash of Civilizations?, Foreign Affairs, 1993. Volume 72, N 3, pp. 22-49. **Хантингтон. С.**, Столкновение Цивилизаций. М.: АСТ, 2003. – 603 с. **Хантингтон С.,** Третья волна. Демократизация в конце XX века /Пер. с англ. — М.: «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003. – 368 с. **Хантингтон С.,** Политический порядок и меняющиеся общества. – М.: Прогресс – Традиция. 2004. – 480 с. **Linz J., Stepan A.,** Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, 1996. – 479p.

[5] **Gabriel A. Almond and G. Bingham Powell**, Comparative Politics: A Developmental Approach,Boston: Little, Brown and Co., 1966.- 348 p. **Lucian Pye,** Aspects Of Political Development: The Concept Of Political Development, 1966.- 205 p.

որի հետևորդներն առաջնային են համարում սոցիալական շարժունակության ապահովումն ու քաղաքական համայնքի ներքո հանրության ինտեգրումը:

Արժեքային համակարգի էվոլյուցիան ինստիտուցիոնալ տեսության հետևորդները դիտարկում են անհատ-պետություն հարաբերությունների պարադիգմում և բաժանում են երեք փուլի[6]: Ռ.Ինգելհարթը Ք.Վելցելի հետ միասին առաջ է քաշում «ժողովրդավարության ազատականացման տեսությունը (the emancipatory theory of democracy)», որն ուղիղ կախվածության մեջ է դնում ազատականացման արժեքներն ու ժողովրդավարական ինստիտուտները[7]: Նրանք անդրադարձ են կատարում սոցիալական փոփոխություններին, որոնք հանգեցնում են արժեհամակարգային փոփոխությունների արդիականացման գործընթացում: Ըստ Ռ.Ռաստոուի, անցումը ժողովրդավարության տեղի է ունենում երկու փոխկապակցված գործոնների համադրման պարագայում՝ ազգային միասնության որոշակի մակարդակի առկայության և սոցիալական հիմնական ուժերի որոշակի քաղաքական մրցապայքարի[8]:

Ժամանակակից աշխարհակարգի, դրանում քաղաքակրթությունների յուրահատուկ դերի և դրան զուգահեռ «ազգային մոդելների» աճող դերակատարության մասին գրում են Ս. Հանթինգթոնը, Հ.Քիսինջերը, Ֆ. Զաքարիան[9]: Ազգային գիտակցության և մշակույթի հարցն արդիականացման տեսության մեջ նորովի ուսումնասիրել է ռուս տեսաբան Վ. Ֆեդոտովան՝ փաստարկելով արդիականացում-արևմտականացում (վեստերնիզացիա) գործընթացների տարբերությունը, և առաջ է քաշել «արդիականացման ազգային մոդել» հասկացությունը՝ հակադրելով այն «վազող-հասնող» մոդելին[10]: Արդիականացման «ազգային մոդելը» զարգացնելիս

---

[6] **Ортега-и-Гассет Хосе**, Восстание масс.-М: ООО "Издательство АСТ" (перевод с исп.), 2016. - 256 с. **Маркузе Г.,** Эрос и цивилизация. Одномерный человек: Исследование идеологии развитого индустриального общества.- М: ООО "Издательство АСТ", 2002. - 526, [2] с.- (Philosophy) **Мартьянов В. С.,** Глобальный Модерн, постматериальные ценности и периферийный капитализм в России. – Полис. Политические исследования. 2014. № 1, с. 83-98.

[7] **Инглхарт Р.,** Модернизация и демократия, Демократия и модернизация, под ред В.Л. Иноземцев. Изд. «Европа»,-М.: 2010, с. 163-182. **Инглхарт Р., Вельцель К.**, Модернизация, культурные изменения и демократия: Последовательность человеческого развития М.: Новое издательство, 2011. — 464 с. **Инглхарт Р.**, Зачем социологи, психологи, экономисты и политологи изучают ценности?, Четвертая лекция цикла «Мировой класс», Москва, 2015. **Welzel C., Inglehart R., Kruse S.**, Pitfalls in the Study of Democratization: Testing the Emancipatory Theory of Democracy, British Journal of Political Science, Cambridge University Press, 2015.

[8] **Rostow W.,** The Stages of Economic Growth, The Economic History Review, New Series, Vol. 12, No.1. 1959. **Растоу Д.А.** Переходы к демократии: попытка динамической модели. – Полис. Политические исследования. 1996. № 5. С. 5, с. 5-15.

[9] **Samuel P. Huntington**, Political Order in Changing Societies, New Haven and London, Yale University Press, Seventh Printing, 1973. – 263 p. **Хантингтон С.,** Кто мы?: Вызовы американской национальной идентичности / С. Хантингтон; Пер. с англ. А. Башкирова. — М.: ООО «Издательство АСТ»: ООО «Транзиткнига», 2004. (Philosophy). — 635, [5] с. **Zakaria Fareed**, The post-American World, W.W.Nortion and Company, Ner York, London, 2008. - 292 p. **Henry Kissinger**, World Order, Penguin Books Limited, United States, 2014.– 420p.

[10] **Федотова В.Г.,** От догоняющей модернизации к национальной: теоретический аспект, Фонд исторической перспективы, 07/12/2007. **Федотова В. Г.,** Модернизация и культура. М.:

Թել-Ավիվի համալսարանի ամբիոնի վարիչ, հրեա հետազոտող Շ.Էյզենշտադը կարևորում է «բազմաթիվ մոդեռնիթիների» գոյությունը[11]:

ԱՄՆ հետազոտող Ռ. Ռոբերթսոնն ինքնորոշման խնդիրներն ուսումնասիրել է քաղաքական արդիականացման գլոլոկալիստական առանձնահատկությունների դրսևորման համատեքստում[12]: Գլոբալ գործընթացների բնույթը տվյալ դեպքում պայմանավորվում է անհատի ինքնորոշմամբ մի քանի հարթություններով՝ անհատ-ազգ-պետություն-մարդ: Անհատի, նրա ինքնության դերը քաղաքական գործընթացներում հատկապես կարևորվում է կոնստրուկտիվիզմի տեսության հեղինակների կողմից[13]: Ինքնորոշման գործընթացում ազգային ինքնագիտակցության աճն ուսումնասիրել են Ու.Ալտերմատը, Օ.Բաուերը, Յ.Հաբերմասը[14]: Է.Սմիտն ազգը դիտարկում է որպես մոդեռնիզմն առաջ մղող հիմնական ուժ, Է.Գելներն ազգային գիտակցության, ինքնորոշման խնդիրները կապում է կրթության, արդյունաբերության, ազգային տնտեսության զարգացման հետ[15]:

Վերլուծելով արդիականացման գործընթացը հետխորհրդային իրականության մեջ՝ հասարակության և պետության ներքո անհատի ինքնահրացման և ինքնորոշման հնարավորությունը, կերպափոխման յուրահատկությունները վերարժևորում են Ի.Սեմենենկոն և Ա Մելվիլը[16]: Ինքնորոշման հիմնախնդիրները քաղաքական արդիականացման համատեքստում հայ իրականության մեջ առաջին անգամ

Прогресс-Традиция, 2016. – 336 с. **Федотова В. Г.,** Различия политических культур и международные конфликты // Полит. исслед. 2015. № 1. С. 44–54. **Fedotova V.,** Democratic Transit: Lessons and Perspectives in Russia // Democracies XXI: A Paradigm Shift. Analytical Report. M., 2015. P. 261–274.

[11] **Eisenstadt S. N.** Multiple M odernities // Daedalus. Winter 2000. Vol. 29, № 1, p.p. 1-29. **Эйзенштадт Ш.,** Срывы модернизации, Неприкосновенный запас. Дебаты о политике и культуре № 74 (6/2010). — М.: Новое литературное обозрение, 2010, с. 42-67.

[12] **Robertson R.,** Beyond the discourse of globalization, Glocalism: journal of culture, politics and innovation, University of Pittsburgh and University of Aberdeen, 2015, 1, p.p. 1-14.

[13] **Wendt A.,** Social Theory of International Politics. Cambridge: Cambridge University Press, 1999. - P. 425.

[14] **Альтерматт У.**, Этнонационализм в Европе. М.: Российск.гос. гуманит. ун-т, 2000. – 367 с. **Бауэр О.,** Национальный вопрос и социал-демократия, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 52-121. **Хабермас Ю.,** Европейское национальное государство: его достижения и пределы. О прошлом и будущем суверенитета и гражданства, Нации и национализм / Б. Андерсон, О. Бауэр, М. Хрох и др; Пер с англ. Н 28 и нем. Л. Е. Переяславцевой, М. С. Панина, М. Б. Гнедовского — М.: Праксис, 2002, с. 364-381.

[15] **Смит Энтони Д.,** Национализм и модернизм: Критический обзор современных теорий и национализма/Пер.с англ. – М.: Праксис, 2004. – 466 с. **Геллнер Э.,** Нации и национализм. М: Прогресс, 1991. – 126 с.

[16] **Семененко И. С.,** Дилеммы национальной идентичности: политические риски и социальные приобретения // Полис. Политические исследования. № 6. 2009, с. 8-23. **Мельвиль А.Ю.**, О траекториях посткоммунистических трансформаций / А.Ю. Мельвиль // Полис. – 2004, с. 64-75. **Melville A.,** “Bad enough governance”: state capacity and quality of institutions in post-soviet authoritarian and hybrid regimes, 23rd World Congress of Political Science (IPSA), July 2014.

ուսումնասիրել է Հ.Քոթանջյանը[17], որը համակարգված վերլուծել է միջազգային և տարածաշրջանային հակամարտություններն էթնոքաղաքականության և անվտանգային խնդիրների տեսանկյունից, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտության համատեքստում: Մ.Մարգարյանն ուսումնասիրել է քաղաքական արդիականացման գործընթացը, դրա զարգացումները, դրսևորման առանձնահատկությունները ՀՀ քաղաքական զարգացման համատեքստում[18]: Հետխորհրդային տարածքի արդիականացման գործընթացները՝ ըստ կիսանախագահական կառավարման համակարգի, ուսումնասիրել է Ա.Մարկարովը[19]:

Ղարաբաղյան հիմնահարցի տարբեր ասպեկտներն ուսումնասիրել են Ա.Մանասյանը, Տ.Թորոսյանը, Ս.Մինասյանը, Յ.Բարսեղովը, Մ.Մայիլյանը[20] և

---

[17] **Քոթանջյան Հ.,** Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008, 604 էջ; **Քոթանջյան Հ.,** Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2009, 655 էջ:

[18] **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման եւ զարգացման հիմնահարցեր, պատ. խմբ. Գ. Հ. Սաֆարյան, Եր., «Պետական ծառայություն», 2004, 269 էջ: **Մարգարյան Մ.,** Քաղաքական ընտրանին եւ ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Պետական ծառայություն», 2006, 391 էջ: **Մարգարյան Մ.**, Քաղաքական արդիականացման արժեքային համակարգի էվոլյուցիան, Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները (Քաղաքագիտական հանարապետության երրորդ գիտաժողովի նյութեր).- Եր.: Խ.Աբովյանի անց. պետական մանկավարժական համալսարան, 2013: **Մարգարյան Մ.,** Ազգային պետության արդիականացման առանձնահատկությունները գլոբալացման գործընթացում, Եր., «Հանրային կառավարում» գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ, Միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, ՄԱՍ 1, 2014, էջ 104-114: **Մարգարյան Մ.**, Ազգային ինքնության արդիականացման հրամայականները (ըստ Ս. Հանթինգթոնի «Ո՞վ ենք մենք. ազգային ինքնության մարտահրավերները» աշխատության), , Եր., «Հանրային կառավարում» գիտական հանդես, ՀՀ ՊԿԱ, 2/2015, էջ 139-146:

[19] **Маркаров А.,** Проблемы консолидации демократии в Армении (на основе анализа ценностных ориентаций и отношений населения Армении), Политическая наука и политические процессы в Российской Федерации и Новых Независимых Государствах. Отв. ред. К. В. Киселев. Екатеринбург: Институт философии и права УрО РАН, Уральская академия государственной службы, 2005, с. 56 – 66. **Маркаров А.,** Полупрезидентализм в контексте постсоветской трансформации (на примере Республики Армения), ПОЛИТЭКС 2, 2006, с. 279-288.

[20] **Մանասյան Ա.,** Ղարաբաղյան հիմնախնդիր, փաստարկներ և փաստաթղթեր (փորձագիտական հայացք), Եր. 2005: **Մանասյան Ա.,** Ղարաբաղյան հակամարտությունը ԽՍՀՄ տրոհման համատեքստում, Եր., 21-րդ ԴԱՐ 4(62), 2015, էջ 47-77: **Թորոսյան Տ,** Հակամարտությունների կարգավորման իրավական հիմքը. տարածքային ամբողջականությո՞ւն, թե՞ ինքնորոշման իրավունք, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, N 1, էջ 3-16: «Нагорный Карабах в международном праве и мировой политике». Комментарии к документам. Том II / Д. ю. н., проф. **Ю.Г. Барсегов**; отв. ред. А.О. Меликян — М. : «Мелихово», 2009. — 480 с. **Минасян С.**, Сдерживание в

այլոք: Օտարերկրացի հետազոտողներից խնդրին առավել մանրամասն անդրադարձել են Թոմաս դե Վաալը, Ս.Մարկեդոնովը, ԵԱՀԿ ՄԽ ռուսաստանցի նախկին համանախագահ Վ.Կազիմիրովը[21]: Այդուհանդերձ, Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հարցը, մասնավորապես՝ բանակցային գործընթացում բախումնային դրույթների և դրանց ընկալման կերպափոխումը, միջազգային փորձի հետ համադրման համատեքստում ուսումնասիրված չէ:

Ուսումնասիրության օբյեկտը Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդիրն է՝ ժամանակակից քաղաքական գործընթացների, միջազգային փորձի համատեքստում:

Ուսումնասիրության առարկան Արցախյան հիմնախնդրի առանձնահատկություններն են, բախումնային դրույթների և դրանց ընկալման կերպափոխումը կարգավորման գործընթացում՝ միջազգային փորձի հետ համադրմամբ:

Հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները: Սույն ատենախոսության հիմնական նպատակն է, ուսումնասիրելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում բախումնային դրույթների և դրանց հանրային ընկալումների կերպափոխումը, նմանատիպ խնդիրների հաղթահարման միջազգային փորձը, մշակել առաջարկություններ՝ ուղղված Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում հայկական կողմերի դիրքորոշման ամրապնդմանն ու հետևողական պաշտպանությանը և Արցախի ժողովրդի ինքնորոշման հիմնախնդրի միջազգային ընկալումների վրա ազդեցություն գործելուն՝ հիմք ընդունելով արդիականացման գործընթացի համատեքստում ինքնորոշման հիմնախնդրի ընկալումները:

Նշված նպատակից բխելով սահմանվել են հետևյալ խնդիրները՝

- քննարկել արդիականացման գործընթացի բազմաչափությունը՝ արժեքային էվոլյուցիայի համատեքստում,
- ուսումնասիրել ինքնորոշման խնդիրը տարբեր մակարդակներում՝ արդիականացման գործընթացի համատեքստում,
- վերլուծել Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը, բախումնային հիմնական դրույթները, դրանց կերպափոխումը բանակցային գործընթացում և հակամարտող կողմերի ընկալման տարբերությունները և դրանց փոփոխման միտումները,
- քննարկել նմանօրինակ հակամարտություններում բախումնային դրույթների վերաբերյալ փոխհամաձայնության ձեռքբերման յուրահատկություններն ու դրանց կիրառելիությունը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

карабахском конфликте; Ред. А. Искандарян. – Ер.: Институт Кавказа, 2016. – 276с. **Маилян М.**, Карабахский мирный процесс. Взгляд из Арцаха.- Ер: Де-Факто, 2016 -320 с.

[21] **Վաալ, Թոմաս դե**, Սև այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով.- Լրացված ու խմբագրված հրատարակություն.-Եր.: «Զանգակ» հրատ, 2014, 488 էջ: **Маркедонов С.,** Де-факто государства постсоветского пространства: двадцать лет государственного строительства, Аналитические доклады Института Кавказа, №5, январь 2012..- Ер.: Институт Кавказа, 2012. – 180с. **Казимиров В.**, Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта. – М.: Междунар. отношения, 2009.- 456с.

Հետազոտության մեթոդաբանությունը: Ելակետ ենք ընդունել այն փաստը, որ մեթոդն իրականության օբյեկտիվ օրենքների բացահայտման գործիք է, որևէ երևույթի կամ գործընթացի տեսական ուսումնասիրության եղանակ[22]:

Արդիականացման գործընթացում ինքնորոշման հիմնախնդրի դիտարկման համար կիրառվել է համակարգային մոտեցում՝ համադրելով վարքաբանական, սոցիոլոգիական, հոգեբանական մեթոդների հետ: Այս մեթոդների կիրառումը հնարավորություն է տվել դիտարկելու արդիականացման գործընթացում տեղի ունեցող արժեքաբանական, ինստիտուցիոնալ և այլ կերպափոխումներ, որոնք ուղղակի և անուղղակի հիմք են ապահովում անհատի, ազգի, պետության, քաղաքակրթության մակարդակներով ինքնորոշման համար:

Միջազգային փորձի համատեքստում Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման հետազոտության ընթացքում շեշտը դրվել է պատմական և համեմատական մեթոդների վրա, ինչը հնարավորություն է տվել Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդիրը դիտարկելու քաղաքակրթական բազմաչափության մեջ, քննարկելու բանակցային գործընթացում բախումնային դրույթների և դրանց ընկալումների կերպափոխումը, նմանօրինակ այլ հակամարտությունների դեպքում այդ բախումնային դրույթների հաղթահարման համար կիրառվող գործիքակազմն ու դրա կիրառելիությունը Ղարաբաղյան հակամարտության պարագայում:

Գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակում առաջադրված հիմնախնդիրների բազմաչափությունը պայմանավորել է վերլուծական մոտեցումների կիրառումը, որոնք հնարավորություն են տվել ինքնորոշման հիմնախնդիրը դիտարկելու քաղաքական արդիականացման գործընթացի համատեքստում: Առաջին անգամ փորձ է կատարվել, առանձնացնելով Ղարաբաղյան հիմնախնդրի բախումնային դրույթները (կարգավիճակի հարց, տարածքային հարց, փախստականների հարց և այլն), վերլուծելու դրանց կերպափոխումը բանակցային գործընթացում և դիտարկելու առանձին հարցերի շուրջ միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունները կարգավորման գործընթացի համատեքստում՝ այդ կերպ նաև Ղարաբաղի ինքնորոշման հիմնախնդրի արդիականացման նպատակ հետապնդելով: Կատարված հետազոտությունը հնարավորություն է տվել հեղինակին հասնելու գիտատեսական և գիտակիրառական նորույթ հանդիսացող հետևյալ արդյունքների.

- քաղաքական արդիականացման գործընթացում ինքնորոշումը դիտարկվել է չորս մակարդակում՝ անհատ, ազգ, պետություն, քաղաքակրթություն, և ցույց է տրվել այդ չորս մակարդակներում ինքնորոշման հարաբերակցական կապը,
- հիմնավորվել է քաղաքական արդիականացման գործընթացում արժեքային էվոլյուցիայի և ինքնորոշման հիմնախնդրի ընկալման միջև առկա կապը: Հակամարտության կողմերում Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի ընկալումների կերպափոխման հիման վրա դիտարկվել է

[22] Методология научных исследований/А.Б.Пономарев, Э.А.Пикулева. – Пермь: Изд-во Перм. нац. исслед. поли-техн. ун-та, 2014, с. 24.

հակամարտության կողմերի քաղաքական արդիականացման ազդեցությունը հակամարտության և դրա կարգավորման գործընթացի ընկալման վրա,

- բացահայտվել է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի ընթացքում հիմնական բախումնային դրույթների կերպափոխումը (ելնելով գաղտնազերծված փաթեթներից)՝ սահմանելով դրանց փոփոխման միտումներն ու ընկալման առանձնահատկությունները հակամարտող կողմերում,
- նորովի է դիտարկվել հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը՝ հիմքում դնելով բախումնային առանձին դրույթների նմանությունը տարբեր հակամարտությունների պարագայում, դիտարկվել են դրանց հաղթահարման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, քննարկվել է այդ հարցերում միջազգային փորձի հնարավոր տեղայնացման արդյունավետությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում,
- ներկայացվել են առաջարկություններ՝ ուղղված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի հետագա զարգացումներից բխող (հայկական կողմերի համար) հնարավոր մարտահրավերների կանխարգելման գործիքակազմի մշակմանը: Զուգահեռաբար, առաջարկվել են քայլեր՝ ուղղված միջազգային հարաբերություններում Արցախի սուբյեկտայնության բարձրացմանը:

<u>Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.</u>

- Անհատ – ազգ – պետություն – քաղաքակրթություն քառամակարդակ քաղաքական արդիականացումը մեկնարկում է անհատի ինքնորոշման գործընթացից: Դրանից բխող հասարակության փոխակերպումների հետևանքով աճում է ազգային գիտակցությունը, և առաջանում է պետական ինստիտուտների միջոցով ինքնահիրացման, ազգային շահերի պաշտպանության պահանջ: Վերջինիս չբավարարման դեպքում աճում է ազգային պետության ձևավորման համար ինքնորոշման պայքարի ծավալման հավանականությունը: Այդ թվում նաև քաղաքակրթական յուրահատկություններից է կախված այդ գործընթացների ընթացքն ու հանգուցալուծումը, առկա խնդիրների լուծման համար կիրառվող գործիքակազմը և ընկալումների կերպափոխումը, որոնք դիտարկվել են աշխատանքում:
- Հակամարտության կողմերի քաղաքական արդիականացման մակարդակը, ժողովրդավարության որակն ու արժեհամակարգը, այլ գործոնների թվում, պայմանավորում են հակամարտության, դրա կարգավորման ուղիների ընկալումը: Էթնոքաղաքական հակամարտությունների պարագայում քաղաքակրթական ընդհանրությունները և/կամ ընդհանուր արժեքների առկայությունը կարգավորման գործընթացում կողմերի երկխոսությունը հեշտացնող գործոն են ծառայում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս դիտարկել դրանք երկխոսության հիմքում դնելու հնարավորությունն ու գործիքակազմը:
- Ժամանակակից քաղաքական գործընթացների ներքո հանրաքվեի միջոցով կարգավիճակի հարցի կարգավորումը միջազգային պրակտիկայում առավել ընդունված և արդյունավետ եղանակն է: Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի, Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում հանրաքվեի միջոցով կարգավիճակի հարցի լուծմանն

ուղղակի և անուղղակի առնչվող զարգացումների ուսումնասիրությունը հնարավորություն է տվել ի հայտ բերել այս հարցի հետ կապված հիմնական մարտահրավերները և դրանց նվազեցման գործիքակազմը: Կարճաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում մարտահրավերների հաղթահարմանն ուղղված հնարավոր գործողությունները ներկայացվել են աշխատանքում:

▪ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի դինամիկայի ուսումնասիրությունը, միջազգային փորձի հետ համադրմամբ, հիմք է տալիս ամրագրելու բանակցային գործընթացի և դրա ընկալումների կերպափոխման հիմնական օրինաչափությունները և արձանագրելու, որ մի շարք դրույթներ սկզբունքորեն անփոփոխ են մնալու նաև գործընթացի հետագա փուլերում, այդ թվում՝ տարածքային հարցերին, հաղորդակցության վերականգնմանը, փախստականների վերադարձին առնչվող կետերը: Այդ կանխատեսումից ելնելով՝ հայկական կողմերի դիրքերի ամրապնդման, այդ դրույթներից բխող մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի որոշակի շրջանակ ներկայացվել է աշխատանքում:

▪ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացի դինամիկան և այլ հակամարտությունների կարգավորման փորձն ապացուցում են, որ այլատյացության քարոզը, ռազմատենչ հռետորաբանությունն ու ընդհանուր ագրեսիվ քաղաքականությունն ապակառուցողական ազդեցություն են ունենում բանակցային գործընթացի վրա՝ անհնար դարձնելով հակամարտության խաղաղ կարգավորումը: Բանակցային ֆոնի բարելավմանը, ուժի և ուժի սպառնալիքի կիրառման բացառմանն ուղղված ջանքերը, տեղական և միջազգային մեխանիզմների ներդրումն անհրաժեշտություն են՝ տարածաշրջանում հարատև և կայուն խաղաղության հաստատման համար: Միջազգային փորձից բխող հնարավոր քայլերի որոշ առաջարկներ ներկայացվել են աշխատանքում:

<u>Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը:</u> Աշխատանքի տեսական նշանակությունը հիմնավորվում է ինքնորոշման հիմնախնդրի բազմաչափության և արդիականացման գործընթացի փոխկապակցված դիտարկման մոտեցմամբ: Չորս մակարդակում ինքնորոշման քննարկումը հնարավորություն է տալիս այդ հիմնախնդիրը դիտարկելու ոչ միայն անհատի, ազգի, պետության ինքնորոշման հոլովույթում, այլև հաշվի առնելու դրա քաղաքակրթական յուրահատկությունները: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս արդիականացման ժամանակակից ընկալումների համատեքստում հիմնավորելու ինքնորոշման իրացման կարևորությունը տարածաշրջանային և գլոբալ կայունության համար:

Կիրառական տեսանկյունից աշխատանքը կարևորվում է նրանով, որ Արցախյան հիմնախնդրի, կարգավորման գործընթացի, դրա ընկալումների կերպափոխման խորքային և համակարգված ուսումնասիրությունը՝ միջազգային փորձի հետ համադրմամբ, հնարավորություն է տալիս մշակելու կիրառական առաջարկություններ՝ ուղղված բանակցային գործընթացի հնարավոր զարգացումների պարագայում հայկական կողմերի համար մարտահրավերների նվազեցմանն ու դիրքերի ամրապնդմանը, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացմանն ու միջազգային ճանաչմանը: Առաջարկները

կիրառելի են ինչպես հիմնական բանակցողների, որոշում ընդունողների, այնպես էլ միջնորդների հետ շփումներում ներգրավված և միջազգային հարթակներում գործունեություն ծավալող պետական ու ոչ պետական դերակատարների համար:

Աշխատանքի փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ՊԿԱ «Քաղաքական կառավարում և հանրային քաղաքականություն» ամբիոնի 2017 թ. նոյեմբերի 10-ի նիստում և երաշխավորվել է պաշտպանության, իսկ հիմնադրույթներն արտացոլվել են գրախոսվող գիտական հրատարակություններում հրապարակված գիտական 10 հոդվածներում:

Հիմնական դրույթներն ու արդյունքները քննարկվել և մասամբ կիրառվել են ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի կողմից, ներկայացվել են գիտաժողովների և սեմինարների ընթացքում, ՋԼՄ-ներում հրապարակված հոդվածներում ու հարցազրույցներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 179 մեքենագիր էջի վրա և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ութ ենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և չորս հավելվածներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, բերվում է գրականության տեսություն, սահմանվում են հետազոտության օբյեկտը և առարկան, ատենախոսական աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ներկայացվում են հետազոտության գիտական նորույթը, ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Ինքնորոշման բազմաչափության հիմնախնդիրները քաղաքական արդիականացման գործընթացում»,** կազմված է երկու ենթա-գլուխներից և նվիրված է արդիականացման գործընթացի արժեքային էվոլյուցիայի ուսումնասիրությանն ու դրա ներքո ինքնորոշման հիմնախնդրի դիտարկմանը:

Առաջին՝ **«Քաղաքական արդիականացման արժեքային էվոլյուցիան: Քաղաքական արդիականացումն անհատ-ազգ-պետություն-քաղաքակրթություն հարթություններում»** ենթագլխում դիտարկվում է «արդիականացում» հասկացությունը, դրա ընկալման յուրահատկություններն արդիականացման տեսության զարգացման տարբեր փուլերում: Քննարկվում է քաղաքական արդիականացման արժեքային էվոլյուցիան, փոխկապակցվածությունը պետության ժողովրդավարացման հետ: Արդիականացման տեսության համատեքստում վերլուծվում է անհատ-ազգ-պետություն պարադիգմը, քաղաքակրթական բաղադրիչը, հատուկ ուշադրություն է հատկացվում արդիականացման «ազգային մոդելների» գաղափարին: Վերհանվում են հետխորհրդային տարածքում քաղաքական արդիականացման գործընթացի յուրահատկությունները:

Երկրորդ՝ **«Ինքնորոշումը որպես քաղաքական արդիականացման բաղադրիչ»** ենթագլխում շեշտը դրվում է արդիականացման գործընթացի

համատեքստում ինքնորոշման խնդրի ուսումնասիրության վրա: Քննարկվում է ազգային ինքնության արդիականացման որպիսությունն ու կերպափոխումը՝ պետականաշինության մշակույթի ներքո: Անդրադարձ է կատարվում ինքնորոշման իրավական կողմին, միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերում ինքնորոշման իրավունքի տեղին: Համեմատության մեջ դիտարկվում են տարբեր հեղինակների մոտեցումներն ազգերի ինքնորոշման հիմնախնդրի վերաբերյալ:

Ատենախոսության երկրորդ՝ «**Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի արտացոլումը բանակցային գործընթացի կերպափոխվող դրույթներում**» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից և նվիրված է Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացի ուսումնասիրությանը, բանակցային գործընթացի ընթացքում հիմնական բախումնային դրույթների կերպափոխման վերլուծությանը:

Առաջին՝ **«Ազգերի ինքնորոշման իրավունքն ու տարածքային ամբողջականության սկզբունքը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում»** ենթագլխում դիտարկվում է այս երկու սկզբունքների հարաբերակցությունը միջազգային իրավունքի համատեքստում և դրա պրոյեկտումը Ղարաբաղյան հակամարտության վրա: Վերլուծության է ենթարկվում Ղարաբաղի կարգավիճակի հարցը, դրա վերաբերյալ մոտեցումների կերպա-փոխումը միջնորդների և կողմերի մոտ: Ներկայացվում է կարգավիճակի հարցի արտացոլումը միջնորդների կողմից առաջարկված կարգավորման փաթեթներում:

Երկրորդ՝ **«Տարածքային խնդիրների ընկալման փոխակերպումները Ղարաբաղյան հակամարտության համատեքստում»** ենթագլխում կատարվում է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի ընթացքում տարածքային հարցերի նկատմամբ մոտեցումների վերլուծություն՝ միջնորդների կողմից ներկայացված փաթեթների հիման վրա: Դիտարկվում է կողմերի մոտ այս հարցի ընկալումների կերպափոխումը:

Երրորդ՝ «**Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարակից և ածանցվող բաղկացուցիչները և դրանց փոխակերպումը բանակցային գործընթացում**» ենթագլխում քննարկվում են հակամարտության կարգավորման մյուս կարևոր բաղկացուցիչները՝ փախստականների վերադարձի, հաղորդակցության վերականգնման հարցերը: Առանձին դիտարկվում են վստահության միջոցների նկատմամբ կողմերի ու միջնորդների մոտեցումները: Վերլուծության ամբողջականացման նպատակով դիտարկվում են Հելսինկյան երեք սկզբունքների նկատմամբ կողմերի մոտեցումները: Կատարված համեմատությունների և վերլուծությունների հիման վրա առանձնացվում են այն գործոնները, որոնք կարևոր ազդեցություն ունեն կողմերի մոտեցումների վրա:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը, դրա տեղայնացման հնարավորությունները Ղարաբաղյան կարգավորման համատեքստում»,** բաղկացած է երեք ենթագլուխներից: Դրանում դիտարկվում են ինքնորոշման իրավունքի հիմքով այլ հակամարտությունները, նմանօրինակ խնդիրներին տրված լուծումները և այդ փորձի կիրառման

հնարավորությունները Ղարաբաղյան հակամարտության համատեքստում՝ հաշվի առնելով հակամարտությունների յուրահատկություններն ու տարբերությունները:

Առաջին՝ **«Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը. ընդհանուր դիտարկումներ»** ենթագլխում անդրադարձ է կատարվում ԱՊՀ տարածքից՝ Մերձդնեստրի հակամարտությանը, Աբխազիայի, Հարավային Օսիայի հակամարտություններին, եվրոպական տարածաշրջանից Ալանդյան կղզիների փորձին, Կատալոնիայի անկախացման գործընթացին, ֆրանս-գերմանական հակամարտությանը, Աֆրիկայից՝ Հարավային Սուդանի անկախացմանը, Էրիթրեային: Վերլուծության են ենթարկվում այդ հակամարտությունների յուրահատկությունները և դրանց ներքո առանձին հարցերի կարգավորման փորձի հնարավորությունը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում:

Երկրորդ՝ **«Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձը. առանձնացված օրինակներ»** ենթագլխում առավել հանգամանորեն անդրադարձ է կատարվում Կոսովոյի անկախացմանը, Կիպրական հիմնախնդրին, Հյուսիսային Իռլանդիայի հակամարտության կարգավորման օրինակին և Շոտլանդիայի անկախացման հանրաքվեին, Արևելյան Թիմորի անկախացմանը: Առանձին վերլուծության է ենթարկվում դրանցից յուրաքանչյուրի ներքո բախումնային այն դրույթների կարգավորումը, որոնք առկա են Ղարաբաղյան հակամարտության պարագայում, դիտարկվում են դրանց կերպափոխման դինամիկան և կողմերի մոտեցումները, դրանց վրա ազդող գործոնները:

Երրորդ՝ **«Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում»** ենթագլխում ամփոփվում է Ղարաբաղյան հակամարտության համատեքստում կիրառելի միջազգային փորձը, մատնանշվում են հիմնական նմանություններն ու տարբերությունները, դրա տեղայնացման յուրահատկություններն ու անհրաժեշտ քայլերը:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ներկայացվում են կատարված վերլուծության հիման վրա արված հիմնական եզրակացությունները և առաջարկություններ՝ ուղղված հայկական կողմերի շահերը թե՛ կարճաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում հետևողականորեն պաշտպանելուն՝ ելնելով բանակցային գործընթացի հնարավոր զարգացումներից:

Առանձնացվել են հետևյալ **եզրակացությունները**.

1. Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման գործընթացում կարևոր դեր են խաղում հակամարտության կողմերի քաղաքակրթական ընդհանրությունները, որոնք թեև չեն երաշխավորում, սակայն մեծացնում են խաղաղ կարգավորման հնարավորությունը: Իսկ հակամարտության կողմերի՝ տարբեր քաղաքակրթությունների պատկանելու պարագայում կարևոր է առնվազն ընդհանուր արժեքային դաշտի առկայությունը, որն զգալիորեն հեշտացնում է կողմերի երկխոսությունն ու հակամարտության կարգավորման ուղիների նկատմամբ փոխադարձ ընդունելի մոտեցումների ձևավորումը:

2. Հակամարտության կողմերի քաղաքական արդիականացման մակարդակը, ժողովրդավարության որակն ու արժեհամակարգն են պայմանավորում հակամարտության, դրա կարգավորման ուղիների ընկալումը, ինչպես նաև սեփական հանրության հանդեպ իրականացվող քարոզչական քաղաքականությունը: Արցախյան հակամարտության պարագայում բանակցային ուղով կարգավորման առաջընթացի կարևորագույն նախադրյալներից մեկը կողմերի արժեքային դաշտերի և ընկալումների միջև մեծ տարբերությունների հաղթահարումն է՝ բայց ոչ արհեստական միջինացման ճանապարհով:

3. Ղարաբաղյան հակամարտությունը որոշակի ազդեցություն է ունենում նաև հակամարտության կողմերի ներքին զարգացումների վրա՝ անվտանգություն - բանակցային գործընթաց - ժողովրդավարություն փոխկապակցված շղթայի միջոցով: Այդ համատեքստում կարող են դիտարկվել նաև Արցախում և Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումները (առաջինի դեպքում՝ անցումը նախագահական, երկրորդի դեպքում՝ խորհրդարանական կառավարման համակարգերի), որոնք որոշ դեպքերում միանշանակ ընկալելի չեն՝ ելնելով պահպանվող պատերազմի վտանգի պայմաններում արագ արձագանքի անհրաժեշտությունից և այլ անվտանգային խնդիրներից: Ուստի երկու հայկական պետություններից պահանջվելու են մի կողմից ջանքեր՝ նման կերպափոխումներից բխող հնարավոր մարտահրավերները հաղթահարելու համար, մյուս կողմից՝ որոշակի ժամանակ և ճկունություն՝ ժամանակի ընթացքում դրանց արդյունավետությունը գնահատելու և, անհրաժեշտության դեպքում, կառավարման համակարգերը կրկին որոշակի փոփոխության ենթարկելու համար:

4. Ղարաբաղյան հակամարտությունը դարձել է հասարակություններից յուրաքանչյուրին պատկանող անհատների ինքնորոշման բաղադրիչ, ինչը խորացնում է թշնամանքն ու դժվարացնում փոխզիջումը: Ուստի, կարևոր է բալանսավորված և կողմերի հիմնական շահերը բավարարող լուծումների ապահովումը, ինչն ուղղակիորեն կախված է քաղաքական կարգավորման ընթացքում փոխադարձ զիջումների գնալու և «win-win» ելքով հակամարտությունը կարգավորելու քաղաքական էլիտաների պատրաստակամությունից:

5. «Կովկասյան բարոմետր» նախագծի ներքո իրականացվող սոցիոլոգիական հարցումների տվյալները ցույց են տալիս, որ եթե Ադրբեջանում Ղարաբաղյան հակամարտությունն ու դրան հարակից հարցերը կարևորվել են որպես երկրի համար առաջնային հարց, ապա Հայաստանում այն բավական փոքր կարևորում է ստացել հանրության կողմից (Արցախում հանրային տրամադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, ինչը թույլ չի տալիս ամբողջական պատկերացում կազմել բոլոր կողմերի ընկալումների վերաբերյալ): Դա ինչպես իշխանությունների ներքին քաղաքականության, այնպես էլ ժողովրդավարացման գործընթացի հետևանք է: Հայաստանի պարագայում Ղարաբաղյան հիմնախնդիրը դասվում է արտաքին քաղաքական առաջնային գերակայությունների շարքին, սակայն նվազեցվում է դրա ուղղակի ազդեցությունը հանրության բնականոն կյանքի վրա:

6. Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ հակամարտության կարգավորման, հարատև խաղաղության հասնելու համար կարևոր է հակամարտության անմիջական բոլոր կողմերին բանակցային գործընթացում հավասար ձայնի իրավունքով ներգրավելը: Բացի այդ, անհրաժեշտ է վերջնական փաստաթղթում ամրագրել նաև տարածաշրջանային այլ դերակատարների պարտավորությունները՝ երաշխավորելով տարածաշրջանային բնականոն հաղորդակցության ապահովումը, բացառելով նրանց ազդեցության ներքո լարվածության նոր օջախների ստեղծումը, բաժանարար գծերի ձևավորումը և այլն: Նման փորձ կիրառվել է Կիպրոսի, Հյուսիսային Իռլանդիայի հիմնախնդիրների կարգավորման գործընթացում:

7. Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը բանակցային գործընթացում մի շարք կերպափոխումների է ենթարկվել՝ Ադրբեջանի կազմում տարբեր կարգավիճակների սահմանումից մինչև հանրաքվեի անցկացում: Հանրաքվեի միջոցով կարգավիճակի հարցի կարգավորումը միջազգային պրակտիկայում առավել ընդունված և արդյունավետ եղանակ է, որը կիրառվել է գրեթե բոլոր դիտարկված հակամարտությունների պարագայում: Բանակցային գործընթացի հետագա կերպափոխումների պարագայում այս դրույթի պահպանումը պետք է սկզբունքային լինի հայկական կողմերի համար: Միաժամանակ, այսօր արդեն անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հանրաքվեի անցկացման ժամանակ հնարավոր ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ՝ չնայած ներկա պայմաններում քննարկվող տարբերակով կարգավորման ոչ իրատեսական լինելուն (օրինակ՝ հանրաքվեից առաջ փախստականների վերադարձի կազմակերպման դեպքում քվոտաների պահպանում՝ նախքան պատերազմը եղած հարաբերակցության խախտում թույլ չտալու համար, խտրական քաղաքականության հետևանքով Արցախից հեռացած հայերի հաշվառում՝ նրանց խախտված իրավունքների վերականգնման և հանրաքվեին մասնակցության իրավունքի ապահովման նպատակով և այլն):

8. Ղարաբաղյան հիմնախնդրի բանակցային գործընթացի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ մի շարք դրույթներ սկզբունքայնորեն անփոփոխ են մնալու նաև գործընթացի հետագա փուլերում, այդ թվում՝ տարածքային հարցերին, հաղորդակցության վերականգնմանը, փախստականների վերադարձին առնչվող դրույթները: Ուստի անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել հայկական կողմերի դիրքերի ամրապնդման, այդ դրույթներից բխող մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ:

9. Տարածքների հարցի շուրջ հակասությունները հաղթահարելու համար միջնորդները ձգտում են փոխզիջումային մոտեցման, որը հիմնված կլինի երկու կողմերի սկզբունքային պահանջների բավարարման վրա: Այն է՝ վերադարձնելով շրջաններից մի քանիսը՝ հնարավորություն ընձեռել Արցախի ժողովրդին հանրաքվեի միջոցով որոշելու վերջնական կարգավիճակը, միաժամանակ ապահովելու անվտանգությունը և կայունությունը: Ապրիլյան պատերազմից հետո տարածքային հարցի քննարկումն առավել բարդացել է, սակայն նույնիսկ իրավիճակի փոփոխության դեպքում այն սերտորեն կապակցված պետք է լինի

Արցախի բնակչության անվտանգության հստակ երաշխիքների ապահովման հետ՝ ապառազմականացրած գոտիների ձևավորում, անխափան հաղորդակցության երաշխավորում և այլն: Տարածքային հարցն առավել խնդրահարույց է նաև մի շարք այլ հակամարտությունների, այդ թվում՝ Կիպրոսի, Կոսովոյի, Մերձդնեստրի պարագայում:

10. Հակամարտության ամբողջական կարգավորման պարագայում տարածքների և փախստականների հարցերի կարգավորման ժամանակ հետագա անկայունություններից ու նոր սպառնալիքներից խուսափելու համար կարևոր է ապահովել փախստականների վերադարձի և փոխհատուցման տրամադրման գործընթացի երկկողմանիությունը, իսկ վերադարձը կազմակերպել՝ հիմքում դնելով փակ անկլավներ, նոր բռնության օջախներ չստեղծելու սկզբունքը (Կոսովոյի փորձից խուսափելու համար): Կիպրական բանակցվող փաթեթն այս տեսակետից կարող է օրինակելի համարվել, քանի որ նախատեսում է սահմանափակումների կիրառում և ժողովրդագրական բալանսի պահպանում (այն քանակով փախստականների վերադարձ, որը թույլ կտա չխախտել բնակչության նախնական տոկոսային հարաբերակցությունը):

Հաշվի առնելով Ադրբեջանում ամրապնդող ավտորիտարիզմն ու մարդու իրավունքների շարունակական խախտումները՝ որևէ վստահություն չի կարող լինել փախստականների վերադարձի կազմակերպման դեպքում վերադարձի կամավորության սկզբունքի պահպանման, ինչպես նաև իրական փախստականներին վերաբնակեցնելու մտադրության նկատմամբ: Ուստի, փախստականների վերադարձը նախապատրաստելու փուլում հատուկ ուշադրություն պետք է հատկացվի վերադարձի կամավորության և գործընթացի թափանցիկության խնդիրներին՝ փաստաթղթերի ստուգում, միջազգային հսկողություն և միջնորդություն:

11. Ղարաբաղյան հակամարտության պարագայում կարծես կարծրացել է այն ընկալումը, որ հաղորդակցության ուղիների վերականգնումը պետք է լինի հակամարտության կարգավորման արդյունք, սակայն միջազգային պրակտիկայում շատ դեպքերում անխափան հաղորդակցությունը ոչ թե կարգավորման բաղադրիչ է, այլ տարածաշրջանի բնականոն կենսագործունեության անհրաժեշտ պայման: Հիմնվելով միջազգային փորձի վրա՝ հայկական կողմերը պետք է աշխատանք տանեն՝ միջնորդների և միջազգային հանրության ընկալումներում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ու տարածաշրջանային հաղորդակցության ուղիների վերականգնման հարցերը միմյանցից տարանջատելու ուղղությամբ: Հաղորդակցության վերականգնումը կարող է դիտարկվել նաև որպես վստահության միջոց՝ ուղղված հասարակությունների շփումների խթանմանը:

12. Արցախի և Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունն անհնար է դարձնում հակամարտության խաղաղ կարգավորումը՝ առաջին հերթին մեծացնելով բանակցային ֆոնի բարելավմանը, ուժի և ուժի սպառնալիքի կիրառման բացառմանն ուղղված ջանքերի անհրաժեշտությունը: Այս համատեքստում հրադադարի պահպանումն ապահովելու համար կարևորություն է ստանում տեղական և միջազգային մեխանիզմների

ներդրումը, ինչպես, օրինակ, Հյուսիսային Իռլանդիայի պարագայում՝ Մարշալի սկզբունքների ստորագրումը, որը հնարավորություն տվեց ռազմատենչ հոետորաբանությունից անցում կատարել քաղաքական բանակցությունների փուլ՝ մեծացնելով հանգուցալուծման հնարավորությունը:

13. Հաշվի առնելով ԵԱՀԿ ՄԽ համանախագահության միջնորդական առաքելության դեմ ուղղված Ադրբեջանի քայլերը, որոնք շարունակականության պարագայում կարող են հանգեցնել ձևաչափի լեգիտիմության կորստին՝ անհրաժեշտ է պատրաստ լինել սցենարային ցանկացած զարգացման, մինչև անգամ այնպիսի իրավիճակի, երբ Ադրբեջանի նախաձեռնությամբ կամ այլ զարգացումների հետևանքով ԵԱՀԿ ՄԽ-ն կդադարի լինել միջնորդական ձևաչափ: Առկա իրավիճակում դա քիչ հավանական է, սակայն այս սցենարը չդիտարկելը և դրանից բխող գործողություններ չձեռնարկելը կարող է հայկական կողմերի համար մարտահրավերներ պարունակել:

14. Գլոբալիզացիան և գլոլոկալիզացիան, մասնավորապես ցանցային կառավարման համակարգը, հնարավորություն են ընձեռում հաղթահարելու քաղաքական միավորների չճանաչվածությունից բխող մի շարք խնդիրներ: Ուստի կարևոր է անհրաժեշտ պայմաններ ապահովել Արցախին և Արցախի բնակչությանը գլոբալ գործընթացի մաս դարձնելու, միջազգային հարթակներում նրանց ձայնը լսելի դարձնելու և «սև խոռոչների» առաջացումից խուսափելու համար: Այդ համատեքստում կարևոր է նաև հնարավորինս շատ ռեսուրսներ կենտրոնացնել Արցախի տնտեսության զարգացման, դեմոգրաֆիկ աճի խթանման և ժողովրդավարության կայացման ուղղությամբ:

15. Կոսովոյի և Արևելյան Թիմորի օրինակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջազգային ճանաչումը, թեկուզ՝ մասնակի, որոշ դեպքերում ոչ միայն չի սրում հակամարտությունը, այլև խթանում է դրա վերջանական կարգավորումը: Հաշվի առնելով Արցախի անվտանգությանը սպառնալիքների աճը՝ Արցախի անկախության ճանաչումը ևս կարող է հակամարտության վերջնական կարգավորման խթան դառնալ: Ուստի, բանակցային գործընթացին զուգահեռ, անհրաժեշտ են հստակ պլանավորված և տարբեր մակարդակներում իրականացվող քայլեր՝ ուղղված Արցախի միջազգային ճանաչմանը, վերջինիս սուբյեկտայնության բարձրացմանը միջազգային հարաբերություններում:

Վերոնշյալ եզրակացությունները հնարավորություն են տալիս ներկայացնել հետևյալ **առաջարկությունները.**

1. Հայաստանի և Արցախի բարձրաստիճան պաշտոնյաների և միջազգային կառույցներում ՀՀ ներկայացուցիչների ջանքերով նպաստել Արցախի ուղղակի կամ անուղղակի ներգրավմանը միջազգային կառույցներում Ղարաբաղյան խնդրի շուրջ քննարկումներին:

2. Եվրոպայի Խորհրդի շրջանակներում ՀՀ անունից նախաձեռնել չճանաչված կամ «կիսաճանաչված» քաղաքական միավորներում մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիայի նախագծի ընդունում՝ հիմքում դնելով նման միավորների հետ ուղղակի աշխատանքի անհրաժեշտությունը:

3. Հիմնվելով Կոսովոյում, Կիպրոսում միջազգային կառույցների գործունեության օրինակների վրա՝ Հայաստանի և Արցախի արտաքին քաղաքական գերատեսչությունների կողմից բարձրաձայնել ԼՂՀ-ում ԵՏ ներկայացուցչություն հիմնելու անհրաժեշտությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության խթանման նպատակով:

4. Որպես բանակցային նպաստավոր միջավայրի ձևավորման միջոցառում՝ առաջարկել Հայաստանի, Արցախի և Ադրբեջանի միջև հստակ միջազգային երաշխիքներով ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման եռակողմ պայմանագիր կնքել՝ ի հավելում հրադադարի համաձայնագրի (նման նախաձեռնությունը, անկախ իրագործման հնարավորությունից, կապահովի հրադադարի ամրապնդմանն ուղղված Հայաստանի և Արցախի որդեգրած քաղաքական գծի շարունակությունը, իսկ իրագործման պարագայում կվերահաստատի ուժի և ուժի սպառնալիքի կիրառումից զերծ մնալու հակամարտության կողմերի պարտավորությունը):

5. Տարին մեկ անգամ միջազգային մասնագիտացված ՀԿ-ների կողմից Արցախի բնակչության շրջանում անցկացնել Ադրբեջանի նկատմամբ վստահության թեմայով սոցիոլոգիական հարցում: Ադրբեջանի հանդեպ արցախցիների անվստահությունն այն գործոնն է, որը ժամանակակից ժողովրդավարական արժեքների տեսանկյունից կարող է ընկալելի դարձնել անհարկի զիջումների չգնալու Արցախի վճռականությունը:

6. Հիմնվելով միջազգային փորձի վրա՝ միջնորդների հետ շփումներում ՀՀ և Արցախի իշխանությունների կողմից բարձրացնել երաշխիքների անհրաժեշտությունը, որ բանակցային գործընթացի առնվազն որոշակի փուլից Արցախն ուղղակի և լիարժեք ներգրավում կստանա բանակցություններին: Սկզբունքների համաձայնեցման դեպքում այդ դրույթը ցանկալի է ամրագրել ստորագրվող փաստաթղթում կամ առնվազն համատեղ հայտարարության տեսքով:

7. Քաղաքական կարգավորման հնարավորության մեծացման դեպքում, առկա բանակցային փաթեթով նախատեսվող տարածքների հարցի քննարկման ժամանակ, անվտանգային լրացուցիչ երաշխիքներ ապահովելու նպատակով պահանջել, որ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնող տարածքներում, ինչպես նաև դրանց հարող Ադրբեջանի այսօրվա տարածքում (նույնքան մակերեսով) բացառվի ռազմական ուժերի տեղակայումը:

8. Արցախ փախստականների վերադարձի հարցի քննարկման դեպքում Հայաստանի և Արցախի անունից պահանջել միջազգային մասնագիտացված միջնորդություն, որը կապահովի վերադարձող անձանց ինքնության հաստատումը, փաստաթղթերի ստուգումը, կերաշխավորի վերադարձի կամավորությունը:

9. Նախնական փուլում ոչ պետական մակարդակով բարձրաձայնել տարբեր տարիներին Արցախն Ադրբեջանի խտրական քաղաքականության կամ պատերազմի հետևանքով՝ իրավունքների խախտմամբ, լքած հայերի առկայության փաստը: Ստեղծել նրանց իրավունքները բարձրաձայնող կառույցներ, որոնք կզբաղվեն հաշվառմամբ, իրավական փաթեթների պատրաստմամբ: Հակամարտության կարգավորման որոշակի փուլում կարող է բարձրաձայնվել այդ մարդկանց խախտված իրավունքների վերականգնման, փոխհատուցման տրամադրման ան-

հրաժեշտությունը: Խախտված իրավունքների վերականգնման ներքո կարող է դիտարկվել նաև Արցախի վերջնական կարգավիճակի որոշման հանրաքվեին նրանց մասնակցության իրավունքի ընձեռումը՝ ապահովել հայերի թվային գերակշռումը:

10. Շարունակական ջանքեր գործադրել Արցախի ճանաչման, այլ երկրներում Արցախի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման, Արցախի արտաքին կապերի զարգացման հարցերում Հայաստանի, Արցախի և Սփյուռքի ռեսուրսները կոնսոլիդացնելու ուղղությամբ: Այդ ուղղությամբ էական քայլ կարող է լինել Արցախի սահմանադրական բարեփոխումների հետագա փուլերում խորհրդարանի երկրորդ պալատի ստեղծումը՝ ՀՀ և Սփյուռքի առավել հեղինակավոր ներկայացուցիչների, համաշխարհային ճանաչում ունեցող անհատների ներգրավմամբ: Արցախում կարող է ձևավորվել Սփյուռքի նախարարություն, ինչպես նաև Սփյուռքի հետ կապերի հանձնաժողով Արցախի Ազգային ժողովում:

11. Հաշվի առնելով Էրջանի օդանավակայանի փորձը, որպես հումանիտար խնդիր և վստահության միջոցառում, միջնորդների ներգրավմամբ հայկական կողմերը կարող են կրկին օրակարգ բերել Ստեփանակերտի օդակայանի գործարկման հարցը:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Կարապետյան Ա., Արցախից հեռացած բնակչության տարբեր խմբերի համակարգման անհրաժեշտությունը // Տարածաշրջանային խնդիրներ, «ԶԱՆԳԱԿ» հրատարակչություն, Երևան, 1/2013.- էջ 176-183:
2. Կարապետյան Ա., Սփյուռք-Հայաստանի Հանրապետություն. համագործակցության նոր վեկտորներ // 2012 թ. դեկտեմբեր 13-14 ՀՀ ՊԿԱ ուսումնական գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր.: «Պետական ծառայություն» հրատարակչություն, 2013.-էջ 53-59:
3. Կարապետյան Ա., 2013 թ.-ը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համատեքստում // Տարածաշրջանային խնդիրներ ժողովածու, «ԶԱՆԳԱԿ» հրատարակչություն, Երևան, 1/2014.-էջ 42-50:
4. Կարապետյան Ա., Արտաքին քաղաքականության մշակման գործընթացում փորձագիտական հանրության ներգրավումը, որպես ՀՀ պետական կառավարման արդյունավետության գրավական // «Հանրային կառավարում» գիտական հանդես, Միջբուհական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 5/2014.- էջ 102-109:
5. Կարապետյան Ա., Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի տրանսֆորմացման դինամիկան բանակցային գործընթացում // Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ: IX-X հոդվածների ժողովածու, Եր. , 2014.- էջ-351-367:
6. Կարապետյան Ա., Կիպրոսի խնդիրը և ղարաբաղյան հակամարտությունը // 21-րդ դար, 3(61), Երևան, 2015.- էջ - 38-46:
7. Կարապետյան Ա., Տարածքային խնդիրների ընկալման փոխակերպումները Ղարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացում // 21-րդ դար, 6(64), Երևան, 2015. - էջ - 26-46:

8. Карапетян А., Маргарян М., Необходимость модернизации национальной идентичности в контексте урегулирования этнополитических конфликтов // Стратегические аспекты публичного управления и территориального развития: материалы ежегод. науч.- практ. конф., Иркутск, 27-28 апр. 2017 г. – Иркутск: Изд-во БГУ, 2017.- С. 15-23.
9. Կարապետյան Ա., Հակամարտությունների կարգավորման միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունը Ղարաբաղյան հակամարտության համատեքստում // «Ժամանակակից Եվրասիա», ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, VI(2), 2017. - էջ - 77-90:
10. Կարապետյան Ա., Շոտլանդիայի անկախացման հանրաքվեն որպես ինքնորոշման գործընթացի օրինակ // 21-րդ դար, 1(77), Երևան, 2018. - էջ - 107-113:

КАРАПЕТЯН АННА ЮРЬЕВНА

«МОДЕРНИЗАЦИЯ ПРОБЛЕМЫ САМООПРЕДЕЛЕНИЯ КАРАБАХА В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССОВ»

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – «Политические институты и процессы, международные отношения».

Резюме

Диссертационная работа на тему «Модернизация проблемы самоопределения Карабаха в контексте современных политических процессов» посвящена глубокому исследованию карабахского конфликта, анализу международного опыта урегулирования конфликтов на основе права на самоопределение и рассмотрению возможности применения этого опыта в контексте карабахского конфликта.

Целью диссертационного исследования является разработка предложений, направленных на укрепление позиций армянских сторон в процессе урегулирования карабахского конфликта - с помощью исследования основных составляющих карабахской проблемы, их общественного восприятия и международного опыта.

Во **введении** обосновывается актуальность темы, приводится обзор использованной литературы, определяются объект и предмет, цель и задачи исследования. Представляются научная новизна, теоретическое и практическое значение работы.

Первая глава - «Проблемы многомерности самоопределения в процессе политической модернизации» - посвящена исследованию ценностной эволюции процесса модернизации и рассмотрению проблемы самоопределения в этом контексте. В главе рассматривается понятие «модернизации» и ее восприятие на разных этапах развития теории модернизации. Обсуждается ценностная эволюция политической модернизации, ее взаимосвязь с демократизацией государства. В контексте теории модернизации подвергается анализу парадигма личность-нация-государство, особое внимание уделяется идее «национальной модели» модернизации. Представляются особенности процессов политической модернизации на постсоветском пространстве. Также рассматривается проблема самоопределения в контексте процессов политической модернизации, особенности восприятия и трансформации национальной идентичности в контексте государствостроения. Приводится анализ подходов различных теоретиков относительно проблемы самоопределения наций и места самоопределения в международных документах.

Вторая глава - «Отражение права Карабаха на самоопределение в трансформирующихся элементах переговорного процесса» - посвящена исследованию переговорного процесса по урегулированию карабахского конфликта, анализу трансформации основных составляющих урегулирования и их общественного восприятия. В качестве одной из основных составляющих урегулирования выделяется вопрос статуса Карабаха - как отражение права на самоопределение в переговорном процессе. Представляется трансформация подхода к этому вопросу в переговорных документах, разработанных посредниками, и

трансформация восприятия этого вопроса у сторон конфликта. В качестве второй основной составляющей урегулирования выделяется вопрос территорий, также рассматривается трансформация этого вопроса в процессе переговоров и в позициях сторон. Исследуются другие составляющие урегулирования: вопрос возвращения беженцев, восстановления коммуникаций и т.д. Отдельное внимание уделяется атмосфере переговоров и механизмам формирования доверия, которые были предложены или испробованы в процессе переговоров. На основе проведенных сравнений и анализа выделяются те факторы, которые оказывают влияние на стороны конфликта, на восприятие отдельных вопросов и вообще на переговорный процесс.

Третья глава - «Международный опыт урегулирования конфликтов, возможности его применения в контексте карабахского урегулирования» - посвящена исследованию международного опыта урегулирования конфликтов, возникших на основе права на самоопределение и анализу возможностей их применения в контексте карабахского конфликта. В качестве таких примеров рассматриваются конфликты региона СНГ – приднестровский конфликт, конфликты Абхазии, Южной Осетии, некоторые конфликты европейского региона – проблема Аландских островов, борьба за независимость Каталонии, немецко-французский конфликт и некоторые конфликты Африки – обретение независимости Южного Судана, Эритреи. Наиболее детальному исследованию подвергается вопрос Косово, кипрская проблема, решение вопроса Северной Ирландии, референдум о независимости Шотландии и обретение независимости Восточного Тимора. Исследуются основные особенности, схожести и различия этих примеров с карабахским конфликтом. В основе анализа этого международного опыта ставится рассмотрение путей и механизмов урегулирования отдельных вопросов, встречающихся также в карабахском конфликте и выделение того опыта, которой может быть адаптирован и применен в случае Карабаха.

В заключении обобщены основные выводы, полученные в результате исследования. На их основе представлены предложения, направленные на укрепление позиций армянских сторон в процессе урегулирования карабахского конфликта, на оказание воздействия на международное восприятие карабахского конфликта и вопроса самоопределения народа Арцаха.

ANNA YURI KARAPETYAN

"MODERNIZATION OF KARABAKH'S SELF-DETERMINATION ISSUE IN THE CONTEXT OF THE MODERN POLITICAL PROCESSES"

Dissertation under 23.00.02 chiper - "Political Institutes and Processes, International Affairs"on request of PhD on Political Sciences

SUMMARY

The dissertation entitled "Modernization of Karabakh's self-determination issue in the context of the modern political processes" is devoted to the deep study of the Karabakh issue, analysis of international experience in the settlement of other international conflicts having on basis the issue of self-determination and the possibility of applying this experience in the context of Karabakh conflict.

The main objective of the dissertation is to develop recommendations aimed at strengthening and protecting the positions of the Armenian sides in Karabakh conflict settlement process, by studying the transformation of the conflicting provisions in the Karabakh conflict settlement process and their public perceptions, the international experience in solving similar problems.

In the **Introduction** the relevance of the topic is justified, the theory of literature is introduced; the object and subject of the research, the purpose and objectives of the dissertation are defined. The scientific novelty of the research, the theoretical and practical significance of the dissertation are also presented.

The first chapter of the dissertation entitled "The Problems of Multi-dimensionality of Self-Determination in the Process of Political Modernization"**,** is devoted to the study of the evolution of values in the modernization process and within that the consideration of the issue of self-determination. The chapter reveals the notion of "modernization" and its perceptual peculiarities at different stages of modernization theory. The evolution of values of political modernization and the interconnection with the democratization of a state are discussed. In the context of the modernization theory, individual-nation-state paradigm is analyzed with particular emphasis on the idea of "national models" of modernization. The peculiarities of the political modernization process in the post-Soviet space are being revived. The issue of self-determination is being considered in the context of the modernization process. The legal side of self-determination and the place of the right to self-determination in the fundamental documents of international law are discussed. Different approaches to the issue of nations' self-determination are viewed in comparison.

The second chapter of the dissertation entitled "The Reflection of Karabakh's Right to Self-Determination in the Transforming Provisions of the Negotiation Process", is devoted to the study of the Karabakh conflict settlement process, the analysis of the transformation of conflict's separate conflicting provisions during the negotiation process. The correlation between the principle of nations' right to self-determination and territorial integrity in the context of international law and its projection on the Karabakh conflict is analyzed. The issue of the status of Karabakh, as well as the transformation of approaches of the mediators and the

parties on the issue is discussed in detail. The reflection of the status issue in the settlement packages proposed by the mediators is presented. The approaches to territorial issues during the Karabakh conflict settlement process based on the packages proposed by the mediators are discussed. The changes of the sides' perceptions on the issue are observed. Other important components of the conflict settlement, including the issues of return of refugee and the recovery of communications are discussed. The sides and mediators' approaches to confidence-building measures are discussed and the differences of those approaches are analyzed. Based on the comparisons and analyzes the factors that have an important impact on the sides' perception on the conflicting provisions of the conflict, and on the settlement process in general, are identified.

In the third chapter of the dissertation, entitled "The International Experience of Conflict Resolution, the Possibilities of Its localization in the Context of Karabakh Conflict Settlement", other conflicts having on basis the issue of the right to self-determination, solutions to similar problems and the possibilities of applying that experience in the context of Karabakh conflict are observed. The dissertation refers to the following conflicts from the CIS space - Transnistria conflict, Abkhazia and South Ossetia conflicts; from the European region - the experience of the Aland islands, of Catalonia, the French-German conflict; from Africa - the independence of South Sudan, Eritrea conflict. A more comprehensive reference is made to the issue of the independence of Kosovo, the Cyprus issue, the example of the Northern Ireland conflict settlement, Scottish independence referendum and the independence of East Timor. A separate analysis of the conflicting provisions under each of them that are also present in the case of the Karabakh conflict are analyzed, the dynamics of their transformation and the sides' attitudes and factors affecting them are discussed. The international experience applicable in the context of Karabakh conflict, the peculiarities of its localization and necessary steps are summarized.

The conclusion summarizes the main findings obtained as a result of the study done. On their basis recommendations are presented aimed at strengthening the positions of the Armenian sides in Karabakh conflict settlement process and at influencing on the international perception on Karabakh conflict and on the very issue of the self-determination of the people of Artsakh.